

ԱԶԳԱՅԻՆ.

ՏԱՐԵԴԱՐԶ ՕԾՄԱՆ

ՎԵՂԱՓԱՌ ԿԱՅՐԱՊԵՏԻ ԱՄԵՆԱՅՆ ԿԱՅՈՑ

Տ. ՄԱԿԱՐԱՅ

Ամսոյս 10 ին Վեհափառ Հայրապետի Յժման տարեգարձը կատարուեց նախընթաց կիրակէ օրը:

Այսպէս ուրեմն Հրեշտակապետաց տօնի Շաբաթ երեկոյեանը ճաշից յետոյ, 3-րդ ժամին յատկացեալ դանգակաց երրեակ հիշմամբ Մայր Աթոռոյս միաբանութիւնը և ճեմորանի աշակերտք խմբուելին եկեղեցի և իւրաքանչիւրը ըստ կարգի և աստիճանի շուրջառով և ժամաշապկով թափօր կազմած՝ տեղի կալան Վեհաբանի մեծ դրան տառջ:

Վեհափառ Հայրապետը յառաջոյ ունելով հայրապետական գրօշակիր խաչ ու գաւազանը՝ որ տանումէին երկու վարդապետք՝ ի՞նչա՛ Վեհաբանից և ծիրանեգոյն հօլանու տակ ընդունելով շուրջառ խոչ և գաւազան՝ օրհնութեամբ սկիզբն տուեց գնացքին. տաճարի բոլոր դանգակները սկսեցին ներդաշնակ հնչել և զպիրք սկսեցին «Հրաշափառ Աստուած» շարականը: Այսպիսի հանդերձանօք Վեհափառ Հայրապետն աղգիս օրհնելով խոնեալ ժողովրդոցը մտաւ եկեղեցի և զպիրք սկսեցին նուագել. «Ուրախ լիւր սուրբ եկեղեցի» շարականը:

Վեհափառ Հայրապետը Ա. իջման սեղանի առաջ մտնելին աղօթելուց և երկրպագելուց յետոյ յաւարտ շարականին՝ սաղմոսեց «Ուրախ եղէ ես այք ասէին ցիս ի տուն Տեառն երթիցսք մեք» սաղմոսը. Առ դրան սուրբ տաճարիս ազօթը արտասանելով և պահպանելով ժողովրդեան օրհնելուց յետոյ՝ ասեանում յարգարած գահաւորակի առաջը կանգնած յաջմէ և յահելէ ունենալով եկեղեցւոյ ուխտը շուրջառաւորեալ՝ սկսեց երեկոյեան ժամերգութիւնը, որին լծարդուեց գիշերային պաշտամունքը մինչև «Հարց»ը:

Աստուծոյ առաւօտեան մնացեալ պաշտամունքը կատարելուց և փոքր ինչ ժամանակ անցնելուց յետոյ ի ձայն յատկացեալ դանգակայ երրեակ հիշման միաբանք՝ ճեմորանի աշակերտք խմբուե-

յին Վեհաբանի գաւիթը և խառն բաղնաթեան ներխուժեամբ ի նախնեաց սահմանեալ մաղթանքը կատարուեց Վեհափառ Հայրապետի օղակալ անդորրութեան, Ս. Էջմիածնի յարառեալ, ցկատարած աշխարհի հաստատութեան և հայ ազգի սիրոյ և միտքանութեան համար: Միտքանութեան կողմից Գողթնեցի մինը ճառ կարդաց:

Յաւարտ, Վեհափառ Հայրապետն ազգիս պահպանիչով օրհնեց բոլոր միտքանութեանը և բոլոր ժողովրդեան աղօթելով առ Աստուած հաստատուն պահել Սուրբ Էջմիածինը և Հայոց ազգը:

Վեհափառ Հայրապետը բարեհաճելով հետզհետէ ընդունել ի ներկայութիւն իւր միտքանութեանը, ձեմարանի աշակերտներին և ժողովրդեանը՝ օրհնեց բոլորին ևս ըստ կարգի և աստիճանի: Սկսուեց Ս. Պատարագը, յաւարտ, Մայր Աթոռոյս միտքանութեան աւագագոյնը, Վաղարշապատի զիւանաւորաց գլխաւորները և օտար տեղերից եկած պատուաւոր հիւրերը հրաւիրուելին ի ճաշ Վեհաբանում, իսկ միտքանութիւնը և այլք՝ Վաղարշապատի առաջաւորների հետ միտքանութեան սեղանատունը:

Միտքանութեան սեղանատանը Գերապատիւ Տ. Մամբրէ Արքազան եպիսկոպոս գեղեցիկ պերճախօսութեամբ բացատրելով աւուր խորհուրդը բարեմաղթութիւններ արեց Վեհափառ Հայրապետի կենաց և բարօրութեան համար, Մայր տաճարի յարառեալ հաստատութեան և օր ըստ օրէ բարգաւաճման ու սպայժառութեան համար, և Հայոց ազգի ու հայ հոգեւորականութեան յատկարկի առաքինութեան բարեկարգ ծաղկման համար:

Սեղանի բարեզարդութիւնը արտափայլում էր սեղանաւորների սրտերը հրճում և հոգեզմայլ ցնծութեամբ բերկրումէին ձեմարանի աշակերտների ներդաշնակ, կանոնաւոր և սրտաւուշ երգասացութեամբ:

Երեկոյեան ճրագալոյց կար. Մայր տաճարի զանգակատան կամարները ցոլացնումէին զգացմունք զարթեցնող դրուագներով՝ ի պատիւ Վեհափառ Հայրապետի, ազգի և Մայր Տաճարի: Տաճարի գաւիթը շուրջանակի լուսաւորուած էր լապտերներով Զահերով և կանթեղներով, տանիքների վերայ շարուած ճրագները հաճելի նշոյլներ էին որձակում: Վաղարշապատի և ալ տեղեաց եկաւորը զրօնումէին ունկնդրելով ձեմարանի աշակերտների քաղցրաձայն և ներդաշնակ երգասացութեան:

Այս դրօսանքն վերջացաւ երեկոյեան Տորդ ժամին, երբ ձեմարանի աշակերտք զանգակատան առաջ տալարիկի վերայ խմբուած կատարեցին հանգստեան ազօխքը, որին ժողովուրդը երկիւզած է մտալի ր զգացմամբ զխորաշ հուղորդ գանս եյ:

Առաջինին հարգանքս ձեռք:

ԱՅՏԱՌԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՎՈՒԱԳԵՏ

Ո՞տայր ինձ այսօր պիւճարան ոճով ձառել արժանապէս զխորհուրդ մեծի տօնիս, և յայտ յանդիման կացուցանել առաջի Ահհափառ Տէրութեանդ, զանհուն բերկրանս սրտից համայն հանդիսակցացս: Ո՞տայր ինձ զմիւր միւր ուրտայտել զհրճուանս, որ ի ժամուս յայսմիկ՝ որպէս զեփիւս հովտաց և բլորոց՝ ներշնչէ ի սիրտս համայն Հայութեան, Զի՞նչ արդեօք այս պատահումն հրաշագործ, յոր սեւեռեալ աչք մեր, խնդայ և խայտայ մերս բնութիւն, և ի դէմս ամենեկուն՝ փայլի բերկրալից ուրախութիւն. քանզի ըստ երգողին «Նրեւեալ ես իբրեւ զառաւօտ» խաղաղութեան, առ որոյ ի սերկեան աւուրս՝ ո՛չ այնպէս փռաւորեալ է երկինք զարդարեալն ի պարս անհամար աստեղաց՝ որպէս աշխարհն Հայաստանեայց, զի առաւել քան զարիւն լուսակէզ փայլեալ յերկիրս Այրարատայ՝ առաւօտ լուսարեւր և զուարթագոյն պարգեւս տարարողդ որդւոցս Հայոց, թէ որոց ի բնիկ Հայրենիս են բնակեալ և թէ որոց ընդ ոլորտս տիեզերաց են տարագրեալք: Ընդ որս և Մայր եկեղեցեաց Հայաստանեայց, լուսափիւս տաճարս Աստուածակառոյց, լցեալ նոր իմն լուսով կենդանութեան՝ զուարճանայ անպատում ուրախութեամբ մեծաշուք հանդիսիւս այսուիկ. հանդիսիւս ասեմ՝ մի ամուս յարեգարծի, Պման Ահհափառ Փեսային Իւրոյ Մեծի Աւետարանչի Գրիստոսական սիրոյ և խաղաղութեան, որ ընկալեալ զՕծումն Քահանայապետութեան՝ ամբարձար յԱթոս Ապիսկոպոսական՝ զՀայրապետականն ժառանգելով անուն:

Արդ վասն՝ և ո՛չ նուաղ շարժին ի խնդ սիրտք մարդապետելոցս յԵջմիտանի՝ ընդ շնորհարեր տօնս այս մեծ, որ և ահա միարանական Աւստս Մայր Աթոռոյս, և մատաղերամ՝ որդիք քո, ուսումնատենչ քանուկք Գէորգաշէն Հոգեւոր ձեմարանիդ, և համայն հանդիսականք ակմբեալք աստ՝ հնչմունս երաժշտական նուագաց և քաղձրաձայն երգս շարականաց հնչեցուցանելով առաջի Աստուածարեալ Հայրապետիդ՝ խառնին ընդ իրեարս խունկք և ծաղկունք անպատում բերկրութեան սրտից մերոց ընդ սիրտս համայն Հայութեան. իսկ բարբառք շրթանցս և արձագանք երգոցս շարժեալ խմբիք որպէս ալիք ի ծով՝ ձախր առեալ վերամբսունան յԱթոս Աստուածութեան. փառս տալով որոյ խաչին Աստուածորդւոյն Յիսուսի, որոյ նշան արժանապէս զբռնի ի ճակատ Քահանայապետիդ Մեծի. որ հանգոյն հնոյ Իսրայէլեան տոհմին՝ պահէ զմեզ ընդ հովանեաւ իւրոյ հզօր խնամակալութեան. և յիշելով զերկս աշխատանաց քրտնաջան վաստակոց բազմերախտ հօրն մերոյ սրբոյն Գրիգորի՝

հայի քաղցր ախմբ առ ազգս Հայոց, որպէս և ահա այսօր իսկ ակնյանդիման տեսանեմք շնորհիւ 'նորին' կրկին ընծիւղեալ զՀառաւիղդ սրբոյ Հօրն Գրիգորի՝ Հայաստաննայց լուսաւորչի:

Արգարեւ, յոյժ չքնաղ և մեծ թուի մեզ հայորերոյս երկրորդ օրս այս Մարգարաց ամսոյ, և արժանի արձանագրելոյ ի յիշատակարանս սրտից մերոց: ոչ միայն զի նախկինն նորոգեցաւ ի մեզ շնորհ երկնային, այլ որ մեծն է՝ շնորհս այս եղիտ զսրժանաւորն իւր զտեղի՝ ի Հայրդ հասարակաց, Արգարեւ, օր երջանիկ և ժամ բարեբաղդ, յընթացս որոյ Հայրապետդ մեծ՝ գթացեալ ի յեղյեղուկ վիճակ ազգիս, որ որպէս ծով ծփայր ի հողմոյ՝ յանձն առեր ամբառնալ ի գերազանց այդ Աթոռ Հովուապետական, և հանգոյն Մեծին Ներսէսի Պարմեառոս՝ Հայրապետին՝ փարատեցեր զմէզ իաւարչտին ի Հայաստան աշխարհէ, բանալով զփակեալ դուռնս մտաւոր մարդարանաց հայալն մանկուոյ, որով ըստ Սողոմոնեան բանին «Էանց ձմեռն՝ և եկն դարուն», և վաղվազակի ծաղկեցին այգիք և պարտեղք մեր բանաւորք հանգոյն զեղած իծաղ ծաղկանցն գարնանայնոյ՝ երբն երբն երանգօք բարգաւաճեալ ի հոտ անոյշ, զուսումն տեսմ՝ և զգիտութիւն՝ զգարագումն ազգային գաստիարակութեան:

Եւ քանզի որպէս տեսանեմք, Քե՛ս՝ փարատելոց է ամպ մթազին յերեսաց Հայրենեաց մերոց, զի նախանձախնդիր ես փառաց և բարօրութեան որդւոցս Հայոց, և տքնիս անխնջ քանիւք պայծառացուցանել զեկեղեցի Հայաստանեայց՝ վանորոյ զբան Յովէլեայ մարգարէին յուշ ածեալ՝ ի ճահ համարիմ բարբառել աստ առ ազգս՝ և առ Հայրենի աշխարհս մեր, թէ «Քաջալերեաց երկիր, խնդաւ և ուրախ լեր, զի մեծացոյց Տէր զառնելն իւր ընդ քեզ, Արդիք Սիւլնի, խնդացէք և ուրախ լերուք ի Տէր Աստուած ձեր, զի ետ ձեզ զկերակուր արգարութեան, զի հոտոյց ձեզ ամացն փոխանակ, յորս եկեր մարան՝ և քորեալն՝ և թրթուրն»: Աստի և մեք երախտադէտ սրտիւք բուռն հարեալ զլարիցն Դաւթեան Սաղմոսարանի՝ օրհնեսցո՛ւք զանուն Տեառն Աստուծոյ մերոյ, որ արար մեզ սրանչելիս, և ասացո՛ւք միահամուռ ձայնիւ «Օրհնեալ է Տէր Աստուած Իսրայէլի, որ առնէ սրանչելիս միայն, և օրհնեալ է անունսորք փառաց Նորա յաւիտեան, լցցի՛ փառօք Նորա ամենայն երկիր, եղիցի՛ եղիցի՛»: Լցցի՛ փառօք Նորա երկիր մեր Հայաստան, լցցի՛ փառօք Նորա եկեղեցին Հայաստանեայց, լցցի՛ փառօք Նորա ազգ մեր Հայկազեան, և բարձրացի՛ ուսմամբ և գիտութեամբ՝ և ազգի ազգի շնորհօք յառաջագիմութեան, իսկ զՔե՛զ, Ո՛ր Արիիդ Հայաստանեայց, լցուցէ՛ Տէր երկարատե ամօք, և առաջնորդեսցէ՛ առ ի կատարումն ամենայն բարի և ազգօգուտ ըղծից Քոց, ի պայծառութիւն եկեղեցւոյ՝ և ի բարգաւաճանս ազգի մերոյ:

ՄԵԾԻ ՀԱՅԲԱՊԵՏԻԿ

ամենախոնարհ որդի և ծառայ և նուաստագոյն միաբան
Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի Նիկողայոս Շախեանց:

Ի Կազմակերպչական Դեմոկրատիկ Կուրգույն-Կույր Ծառաւ.

Ի Մեծ-Շնորհք Ընտիր ՏԱՐԵԿԱՐԶԻ ՕԺՄԱՆ

ՏԵԱՌՆ ՄԱԿԱՐԱՅ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿԻ

ԵՒ ԿԱԹՈՒՂՈՒԿՈՍՏ ԸՄԵՆԱԹՆ ՀԱՅՈՑ

Մեծ և անդուգական է արդարեւ խնդութիւն մեր ի սերկեանս աւուր, զի ահա այսօր Եկեղեցի Հայաստանեայց բարձր ի ճակատ ի հանդերձանս փառաց և շքոյ ընդ որդիս իւր համայն տօնէ զտարեգարձ Օծման Փետային իւրոյ սիրելւոյ, որ արժանապէս անցեալ ունի զտեղի հարց մերոց սրբոց առաջնոց, և ընդ նոյն արահետ գնալով, զոր նոքա ընթացան, գուն գործէ ի վաստակս մօծամեծս և ի ճգունս շահաւէտս առ ի պայծառութիւն եկեղեցւոյ և ի բարգաւաճման Թորգոմեան ազգիս:

Բաստ մեծ է մեզ այս արդարեւ. բաստ երկնային, զի հուսկ ուրիմն պարգեւեցաւ մեզ Հովիւ արժանի և Բահանայապետ Օծեալ Աստուծոյ, որ ընդ ամենայն հանդէս գործոց բարեաց քաջապէս նահատակեալ և կրթեալ՝ ճաշէ զեկեղեցի և զազգ իւր, գիտէ զպէտս նորա զհոգեորս և զմարմնաւորս և փոյթ յանձին ունի ի կատարումն նոցա: Ասան որոյ և արդարապէս խնդայ այսօր Եկեղեցի Հայաստանեայց և Ազգ մեր համայն, և ի տրիտուր շնորհակալեաց և մօծ ի խնդութեան մատուցանէ Բարձրելոյն զմաղթման իւր, հեղու զառաջեալ գահոյիցն զպաղատանսն, խնդրելով կաթողին, զի ամբ բազումք որպէս ծաղկունք նորափթիթք ի պսակս և ի փունջս փողփողենէջս անթառամ ծաղկեցին զճակատու Մեծի Հայրապետիդ և ցանգ այս արփի շնորհարեր և լուսաճաճանշ անտրտում ծագեցէ ի գահ յայս սուրբ և պանծալի:

Այլ ո՞ առաւել, ո՞ ապաքէն արդեօք, քան եթէ մեր մանկունքս Եկեղեցւոյ մերոյ Սրբոյ և որդիքս Հովուապետիդ սիրայնոյ խնդացուք խնդութիւն մեծ և բերկրապատար. որք ի կողմանց կողմանց աստէն զմիով փայրօք հասեալք ի գիրկս Առաքելական Մայր Եկեղեցւոյ և Գահակալի նորին տաժիթք և յանձանձիթք, որպէս եղջերու ծարաւի յաղբերէ անտի շնորհաց և իմաստութեան զպասքեալ հոգիս և զմիտս ոռոգանեմք:

Ասան որոյ երգ ի բերան և սիրտք ի տրտի ընդ այս մեծաշուք հանդէս դիմեմք միաբան յոտս Ահհափառութեան Չերոյ, և մաղթեմք զօրհնութիւն Չեր երկնապարգև, զի զօրացեալք ի նոյն եղիցուք ըստ ըզձից՝ Չերոց մանկունք կատարեալք Եկեղեցւոյ և Ազգի, և լուիցուք ի Զէնջ զերանականն բան, թէ ահա ես և մանկունք իմ:

Չերումէ Ահհափառութեան

ամենախոնարհ որդի Բ-դ Լսարանի ուսանող Արշակ Տ. Միքայելեանց

ի դիմաց համօրէն աշակերտաց

ճեմարանի: